ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N1838 - Ա **31 մարտի 2009թ.**

ԱՐՄԵՆԱԿ ԱՐՄԵՆԱԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ. 113/1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՂԱՍԻ ՎԵԼԵԽԱՆԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ, ԵՐԱԶԻԿ ՄՆԱՑԱԿԱՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ, ԳԱԳԻԿ ԱՂԱՍՈՒ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ, ԷՄՄԱ ԱՂԱՍՈՒ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Աղասի Վելեխանի Մանուկյանի (ծնված 09.10.1955թ.), Երազիկ Մնացականի Գրիգորյանի (ծնված 20.08.1965թ.), Գագիկ Աղասու Մանուկյանի (ծնված 05.08.1982թ.), Էմմա Աղասու Մանուկյանի (ծնված 11.09.1984թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Արմենակ Արմենակյան փողոցի հ.113/1 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 118.49քմ, որից 42քմ մակերեսով հողամասն Աղասի Վելեխանի Մանուկյանին, Երազիկ Մնացականի Գրիգորյանին, Գագիկ Աղասու Մանուկյանին, Էմմա Աղասու Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող հողամաս է (վկայական տրված 30.06.1998թ. հ.009453): Օրինական հողամասին կից օգտագործվող 76.49քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարաշ տարածքային ստորաբաժանման 07.10.2008թ. հ.7953ա, Երևանի քաղաքապետարանի «Հողի և ունեցվածքի գործառնություններ» ՊՓԲԸ-ի 15.12.2008թ. հ. 20/2-Ե/367 գրությունները, Երևանի քաղաքապետարանի «Քաղաքաշինություն» ՊՓԲԸ-ի 03.12.2008թ. հ.20-Ել-1826 եզրակացությունը, համաձայն որի Արմենակ Արմենակյան փողոցի հ. 113/1 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով «Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Արմենակ Արմենակյան փողոցի հ.113/1 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Աղասի Վելեխանի Մանուկյանի, Երազիկ Մնացականի Գրիգորյանի, Գագիկ Աղասու Մանուկյանի, Էմմա Աղասու Մանուկյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 42քմ մակերեսով հողամասին

կից 76.49քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 76.49քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ։

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարաշ տարածքային ստորաբաժանման կողմից։

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

4. Ամառանոցային փողոցի հ.113 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ «Արմենակ Արմենակյան փողոցի հ.113/1 տուն»։

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարաշ տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Աղասի Վելեխանի Մանուկյանի, Երազիկ Մնացականի Գրիգորյանի, Գագիկ Աղասու Մանուկյանի, Էմմա Աղասու Մանուկյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Նորք-Մարաշ թաղապետարան։

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ**